

ԵՊՀ-ի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2017 թվականի  
նոյեմբերի 6-ին կայացած Գիտական Խորհրդի N3 նիստի

Նախագահ – Մ.Ա. Գրիգորյան

Քարտուղար – Ե.Ս. Մանուկյան

Ներկա էին՝ 38 անդամներից 27-ը (ցուցակը կցվում է)

Դեկան Մ.Ա. Գրիգորյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օրակարգ.

1. «Սերվիսի» ամբիոնի վարիչի հաշվետվությունը ամբիոնում կատարած աշխատանքների

վերաբերյալ

/զեկ. Սերվիսի ամբ. վարիչ, դոց. Ս.Ռ. Սուվարյան/

2. Գիտական հաղորդում

3. Ընթացիկ հարցեր

1. **ԼՍԵՑԻՆ.** Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Սերվիս ամբիոնի վարիչ Ս.Ռ. Սուվարյանի հաշվետվությունը ամբիոնում կատարած աշխատանքների վերաբերյալ: Ամբիոնում ներկա պահին սովորում են 638 ուսանող: Ասպիրանտների և մագիստրոսների միջոցով ամբիոնը հարցում է կատարել շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ: Հարցմանը մասնակցել են շրջանավարտներից 200 հոգի, ովքեր գնացել են դեպի տուրիստական գործակալություն, կապ-հաղորդակցություն, մանրածախ առևտուր, բանկեր, հյուրանոցներ, սպորտային համալիրներ: Ամբիոնի դասախոսները ոչ միայն մասնակցում են վերապատրաստման դասընթացների այլև պատրաստում է վերապատրաստման դասընթացներ: Սուվարյանը խոսեց նաև նյութատեխնիկական բազայի ընդլայնման մասին: Կադրերով համալրելու մասին: (Հաշվետվությունը կցվում է):

**ՀԱՐՑԵՐ ՏՎԵՑԻՆ. Թ.Գ. Վարդանյանը** հարցրեց ներկայացվող աշխատանքի վաղեմությունը: Ներկայացված միջազգային կազմակերպություններից, մեր օրերում, որոնց հետ ունեն կնքած հուշագիր:

**Մ.Գ.Մանասյանն** ասաց, որ բավականին լավ ներկայացվեց հաշվետվությունը և հետաքրքրվեց, արդյո՞ք կա որևէ երկրում աշխարհագրական ֆակուլտետի համարակգում “սերվիս”-ի մասնագետ պատրաստելու փորձ: Եվ կա արդյո՞ք նախադեպ աշխարհագետի կողմից գրված սերվիսագիտություն դասագիրք:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Մ.Ա.Գրիգորյանն** ասաց, որ Սերվիսի ամբիոնը կայացած է ֆակուլտետում առաջին ամբիոններից մեկն է որ հստայական ծավալի աշխատանք է կատարում: Այն ծրագրերը, որ այսօր ամբիոնը ներկայացնում է համապատասխանում է միջազգային բոլոր ստանդարտներին: Այն որ ամբիոնի երիտասարդ դասախոսներ հրավիրվում են դասախոսություն կարդալու դա խոսում է ամբիոնի բարձր մակարդակի մասին: Սերվիսի ամբիոնը կազմակերպելու է խորհրդակցություն սերվիսի և գեոէկոլոգիայի առկա խնդիրները և դրանց զարգացումը ՀՀ-ում: Մ.Գրիգորյանը խոսեց նաև թույլ կողմերի մասին, որն արտահայտվում է համայնքային միջոցառումներում ամբիոնի սակավաթիվ մասնակցությամբ: Առաջարկեց ամբիոնի կատարած աշխատանքը գնահատել բավարար

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Ամբիոնի կատարած աշխատանքը գնահատել բավարար

**2.1 ԼՄԵՑԻՆ.** Մոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի ասպիրանտ Էսմայիլ Մոհաջերի գիտական հաղորդումը «Էկոտուրիզմի զարգացումը Իրանի Գոլեստանի նահանգում» (ԻԴ.03.01 Աշխարհագրություն) թեմայի վերաբերյալ:

**ՀԱՐՑԵՐ ՏՎԵՑԻՆ.**

դոց.,դոց. Ռ.Ս.Մովսեսյանը, Ժ.Ա.Աչոյանը

Հեղինակը բոլոր հարցերին տվեց հանգամանալից պատասխան:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ա.Ավագյանն** իր խոսքում ասաց, որ Ի.Մոհաջերը 2009 թվականից հրամանագրված է որպես ասպիրանտ: Աշխատանքի կատարմանը նպաստել է Մոհաջերի բնապահպանության նախարարի տեղակալ լինելու հանգամանքը ինչը թույլ է տվել աշխատանքում օգտագործել բազմաթիվ պաշտոնական տվյալներ: Ավագյանը նեց, որ Աշխատանքը բավարարում է ԲՈՀ-ի կողմից ներկայացված պահանջներին և առաջարկեց երաշխավորել հրապարակային:

**Մ.Գրիգորյանը** շեշտեց Սոհաջերի ներկայացված իրազեկ լինելու և նույնպես առաջարկեց աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Էսմայիլ Սոհաջերի «Էկոտուրիզմի զարգացումը Իրանի Գոլեստանի նահանգում» վերնագրով ներկայացված աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**2.2 ԼՄԵՑԻՆ.** Սոցիալ- տնտեսական ամբիոնի ասպիրանտ Ամիր Հոսսեին Ֆարհադիանի գիտական հաղորդումը «Թեհրան քաղաքի կայուն զարգացման հնարավորությունների գնահատումը» (ԻԴ.04.01 Երկրաբնապահպանություն) թեմայի վերաբերյալ:

**ՀԱՐՑԵՐ ՏՎԵՑԻՆ.** Մանասյանը, Վ.Պ.Վարդանյանը, Ս.Ա.Առաքելյանը, Ռ.Ս.Մովսեսյանը, Ս.Հ.Հայրոյանը:

Հեղինակը բոլոր հարցերին տվեց հանգամանալից պատասխան

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Կ.Դանիելյանն իր խոսքում նշեց, որ ներկայացված հսկայական աշխատանքը, որն իրականացրել է Ամիր Հոսսեին Ֆարհադիանն շատ կարևոր է քաղաքի համար: Տեղամասի ապակայունացման խնդիրը շատ լուրջ է, և նման աշխատանքները աջակցություն են ստանալու Էկոլոգիական ճգնաժամից դուրս գալու նպատակով,-ասաց Կ.Դանիելյանը:

**Վ.Վարդանյանը** շեշտեց նախկինում Ամիրի կատարած աշխատանքը խիստ տարբերվում է ներկայիս թե՛ ներկայացման ոճի և թե՛ բովանդակությամբ և վերլուծված խնդիրներով: Վարդանյանն ասաց, որ դրված էր խնդիր և լուծումը տրված էր: Աշխատանքը բավարարում է ԲՈՀ-ի կողմից ներկայացված պահանջներին և առաջարկեց երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**Մ.Գ.Գրիգորյանը** միացավ Վարդանյանի առաջարկին և ավելացրեց, որ ներկայացման որակը ապացուցեց գիտակ լինելուն:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Ամիր Հոսսեին Ֆարհադիանի «Թեհրան քաղաքի կայուն զարգացման հնարավորությունների գնահատումը» վերնագրով ներկայացված աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

### **3. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ**

**3.1 ԼՄԵՑԻՆ.** Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի սերվիսի ամբիոնի վարիչ Ս.Սուվարյանի հաղորդումը <Սերվիս> մասնագիտության 3-րդ կուրսի ուսանող Արմինե Գառնիկի Գևորգյանի թեկնածությունը “Լավագույն Ուսանող” մրցույթին առաջադրելու վերաբերյալ:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաշվի առնելով <Սերվիս> մասնագիտության 3-րդ կուրսի ուսանող Արմինե Գառնիկի Գևորգյանի ուսման գերազանց առաջադիմությունը՝ հասարակական ակտիվ գործունեությունը, ամբիոնի և գիտական խորհրդի անդամների դրական կարծիքը՝ երաշխավորել “Լավագույն Ուսանող” մրցույթին մասնակցելու:

**3.2 ԼՄԵՑԻՆ.** Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի սերվիսի ամբիոնի վարիչ Ս.Սուվարյանի հաղորդումը <Սերվիս> մասնագիտության 3-րդ կուրսի ուսանող Անի Գեղամի Հակոբյանի թեկնածությունը “Լավագույն Ուսանող” մրցույթին առաջադրելու վերաբերյալ:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաշվի առնելով <Սերվիս> մասնագիտության 3-րդ կուրսի ուսանող Անի Գեղամի Հակոբյանի ուսման գերազանց առաջադիմությունը՝ հասարակական ակտիվ գործունեությունը, ամբիոնի և գիտական խորհրդի անդամների դրական կարծիքը՝ երաշխավորել “Լավագույն Ուսանող” մրցույթին մասնակցելու:

**3.3 ԼՄԵՑԻՆ.** Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի սերվիսի ամբիոնի վարիչ Ս.Սուվարյանի հաղորդումը <Սերվիս> մասնագիտության 4-րդ կուրսի ուսանող Լիլիթ Սպարտակի Խլղաթյանի թեկնածությունը “Լավագույն Ուսանող” մրցույթին առաջադրելու վերաբերյալ:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաշվի առնելով <Սերվիս> մասնագիտության 4-րդ կուրսի ուսանող Լիլիթ Սպարտակի Խլղաթյանի ուսման գերազանց առաջադիմությունը՝ հասարակական ակտիվ գործունեությունը, ամբիոնի և գիտական խորհրդի անդամների դրական կարծիքը՝ երաշխավորել “Լավագույն Ուսանող” մրցույթին մասնակցելու:

**3.4 ԼՄԵՑԻՆ.** Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի սերվիսի ամբիոնի վարիչ Ս.Սուվարյանի հաղորդումը <Սերվիս> մասնագիտության 4-րդ կուրսի ուսանող Նարինե Մարտիրոսի Աբգարյանի թեկնածությունը “Լավագույն Ուսանող” մրցույթին առաջադրելու վերաբերյալ:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաշվի առնելով <Սերվիս> մասնագիտության 4-րդ կուրսի ուսանող Նարինե Մարտիրոսի Աբգարյանի ուսման գերազանց առաջադիմությունը՝ հասարակական ակտիվ գործունեությունը, ամբիոնի և գիտական խորհրդի անդամների դրական կարծիքը՝ երաշխավորել “Լավագույն Ուսանող” մրցույթին մասնակցելու:

**Խորհրդի նախագահ**

**Մ.Ա.Գրիգորյան**

**Խորհրդի քարտուղար**

**Ե.Ս.Մանուկյան**